ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՏԱԼՎՈՐԻԿԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИА
МАРЗ АРМАВИРА
ОБШИНА ТАЛВОРИК

« 15 » Դեկտեմբերի 2015թ.

N 94

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ,

Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Տալվորիկ գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի Դեկտեմբերի 7-ի թիվ 15 արտահերթ նիստի որոշումները:

Տալվորիկ գյուղական համայնքի ղեկավար՝ Կ.Մաղաթելյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 112.96/13457-15
15 12 2015

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ՏԱԼՎՈՐԻԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
# ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

2015 թվականի Դեկտեմբերի 7 — թիվ 1

## ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով.

Տալվորիկ համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է՝

1. Հաստատել թիվ 15 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Ա. Մկրտչյան | | | |
| Հ. Վարդանյան | | | |
| Վ. Հարությունյան | | | |
| Ջ.Զաքարյան | | | |
| Խ.Ավդալյան | | | |

ՏԱԼՎՈՐԻԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ.ՍԱՂԱԹԵԼՅԱՆ

2015 թվականի Դեկտեմբերի « 7 »

գ. Տալվորիկ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱԼՎՈՐԻԿ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի
ԹԻՎ 15 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՈՐՈՇՄԱՆ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. Օրակարգի հաստատումը: — Զեկ՝ Կ. Սաղաթելյան

2. Տալվորիկ համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափը հաստատելու մասին: — Զեկ՝ Կ. Սաղաթելյան

3. Տալվորիկ համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2016 թվականի դրույքաչափերը հաստատելու մասին: — Զեկ՝. Կ. Սաղաթելյան

4.Գյուղապետարանի մատուցված 2016 թվականի համայնքի վարչական տարածքում մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերի հաստատման մասին: — Զեկ՝. Կ. Սաղաթելյան

5Արմավիրի մարզի Տալվորիկ գյուղական համայնքի 2014 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 10 նիստի ավագանու որոշմամբ հաստատված 2015 թվականի տարեկան բյուջեի վարչական մասում փոփոխություններ կատարելու մասին: — Զեկ՝ Կ. Սաղաթելյան

6. Տալվորիկ համայնքի ղեկավարի աշխատակազմի և ենթակա բյուջետային հիմնարկների կառուցվածքների, աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին: — Զեկ՝ Կ.Սաղաթելյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՏԱԼՎՈՐԻԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

2015 թվականի Դեկտեմբերի 7 թիվ 2_Ն

## ՏԱԼՎՈՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով.

Տալվորիկ համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է՝

1. Հաստատել Տալվորիկ գյուղական համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափը համաձայն հավելվածի.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| | | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|---|
| ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ | Ա. Մկրտչյան | | | |
| | Հ. Վարդանյան | | | |
| | Վ. Հարությունյան | | | |
| | Զ.Զաքարյան | | | |
| | Խ.Ավդալյան | | | |

ՏԱԼՎՈՐԻԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ.ՍԱՂԱԹԵԼՅԱՆ

2015 թվականի Դեկտեմբերի « 07 »
գ. Տալվորիկ

ՀԱՎԵԼՎԱԾ
2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի
ԹԻՎ 15 ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ
ՆԻՍՏԻ ԹԻՎ 2-Ն ՈՐՈՇՄԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տալվորիկ գյուղական համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափը սահմանել

1. Կիրակոս Եղիշի Սաղաթելյան ------- 186895 դրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՏԱԼՎՈՐԻԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

2015 թվականի Դեկտեմբերի 07 — թիվ 3-Ն

# ՏԱԼՎՈՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1_ին մասի 18-րդ կետով.

Տալվորիկ համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է՝

1. Հաստատել Տալվորիկ գյուղական համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2016 թվականի դրույքաչափերը, համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Ա. Մկրտչյան | | | |
| Հ. Վարդանյան | | | |
| Վ. Հարությունյան | | | |
| Ջ.Զաքարյան | | | |
| Խ.Ավդալյան | | | |

ՏԱԼՎՈՐԻԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ.ՍԱՂԱԹԵԼՅԱՆ

2015 թվականի Դեկտեմբերի «07»
գ. Տալվորիկ

ՀԱՎԵԼՎԱԾ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՏԱԼՎՈՐԻԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի ԹԻՎ 15 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ 3-Ն ՈՐՈՇՄԱՆ

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱԼՎՈՐԻԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝ հիմնական օբյեկտների համար.

1) մինչև երեք հարյուր քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև երկու հարյուր քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ հինգ հազար դրամ։

2) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. երկու հարյուր մեկից մինչև հինգ հարյուր քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար ՝ տասնհինգ հազար դրամ.

բ. հինգ հարյուր մեկից մինչև հազար քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ երեսուն հազար դրամ.

գ. հազար մեկ և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ երեսուն հազար դրամ.

3) մինչև քսան քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ հազար հինգ հարյուր դրամ.

4) քսան և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների բացառությամբ (Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարությամբ թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն հազար դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, վերականգնման կամարդիականացման աշխատանքներից նախատեսվում է նաև կցակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնվող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի,

կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերի օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.
3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր

շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը:
3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրք սահմանել երկու հազար դրամ:
4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանել՝
1) ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում, վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ երեք հազար դրամ:
2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար՝ երեք հազար դրամ:
5. Համայնքի տարածքում՝
1) բացօթյա առևտուր կազմակերպելու համար տեղական տուրք սահմանել յուրաքանչյուր օրվա համար երեք հարյուր դրամ:
2) հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել մեկ հարյուր հիսուն հազար դրամ:
6. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներով պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել հիսուն հազար դրամ:
7. Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպմամբ օբյեկտները, բաղնիքները (սաունաները) խաղատները ժամը 24:00-ից հետո խախտելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝
1) առևտրի օբյեկտների համար քսանհինգ հազար դրամ.
2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար հիսուն հազար դրամ.
3) բաղնիքների (սաունաները) համար՝ երկու հարյուր հազար դրամ.
4) խաղատների կազմակերպման համար՝ հինգ հարյուր հիսուն հազար դրամ.
5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ երկու հարյուր հազար դրամ.
6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ մեկ հարյուր հազար դրամ.
8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համր արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝
1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև քսան ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար ՝մեկ հազար դրամ.
2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը քսան և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ:
3) այլ արտաքին գովազդի համար հինգ հարյուր դրամ.
4) դատարկ գովազդային վահանակի համար՝ յոթ հարյուր դրամ.
9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճենների և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել մեկ հազար դրամ.

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայության իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել հինգ հազար դրամ:

11. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու , ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար գյուղապետարանի մատուցած ծառայությունների դիմաց սահմանել փոխհատուցման վճար՝ հինգ հազար դրամ.

12. Գյուղապետարանի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար՝ գյուղապետարանի մատուցած ծառայությունների դիմաց սահմանել փոխհատուցման վճար մեկ հազար դրամ.

13. Գյուղապետարանի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար հինգ հազար դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՏԱԼՎՈՐԻԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

2015 թվականի Դեկտեմբերի 07 — թիվ 4_Ն

# ՏԱԼՎՈՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻՆ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետով.

Տալվորիկ համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է՝

1. Սահմանել Տալվորիկ համայնքի վարչական տարածքում 2016 թվականի գյուղապետարանի կողմից խմելաջրի ծառայությունների դիմաց համայնքում փաստացի բնակվող յուրաքանչյուր տնտեսության համար գանձվող վճարների դրույքաչափերը 1000 դրամ, համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| | | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|---|
| ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ | Ա. Մկրտչյան | | | |
| | Հ. Վարդանյան | | | |
| | Վ. Հարությունյան | | | |
| | Զ.Զաքարյան | | | |
| | Խ.Ավդալյան | | | |

ՏԱԼՎՈՐԻԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ.ՍԱՂԱԹԵԼՅԱՆ

2015 թվականի Դեկտեմբերի «07»
գ. Տալվորիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՏԱԼՎՈՐԻԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

2015 թվականի Դեկտեմբերի 07 — թիվ 5-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱԼՎՈՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-ի ԹԻՎ 1 ՈՐՈՇՄԱՄԲ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 5-րդ մասով .

Տալվորիկ համայնքի ավագանին որոշում է`

1. Համայնքի վարչական բյուջեի պահուստային ֆոնդից` 11/1/2 հատվածի 4891 հոդվածից 560.0 հազար դրամ ուղղել 10/7/1 հատվածի 4729 հոդվածի միջոցներին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ տասներորդ օրը :

| | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ` Ա. Մկրտչյան | | | |
| Հ. Վարդանյան | | | |
| Վ. Հարությունյան | | | |
| Զ.Զաքարյան | | | |
| Խ.Ավդալյան | | | |

ՏԱԼՎՈՐԻԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ.ՍԱՂԱԹԵԼՅԱՆ

2015 թվականի Դեկտեմբերի « 07 »
գ. Տալվորիկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ՏԱԼՎՈՐԻԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
# ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

2015 թվականի Դեկտեմբերի 07 — թիվ 6-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ԵՆԹԱԿԱ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1_ին մասի 26-րդ կետով.

Տալվորիկ համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է՝

1. Հաստատել Տալվորիկ գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի և ենթակա բյուջետային հիմնարկների հաստիքացուցակը, համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| | | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|---|
| ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ | Ա. Մկրտչյան | [signature] | | |
| | Հ. Վարդանյան | [signature] | | |
| | Վ. Հարությունյան | [signature] | | |
| | Ջ.Զաքարյան | [signature] | | |
| | Խ.Ավդալյան | [signature] | | |

ՏԱԼՎՈՐԻԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ [signature, stamp] Կ.ՍԱՂԱԹԵԼՅԱՆ

2015 թվականի Դեկտեմբերի « 07»

գ. Տալվորիկ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱԼՎՈՐԻԿ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2015 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի ԹԻՎ 15
ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ԹԻՎ 6 ՈՐՈՇՄԱՆ

## 2016 ԹՎԱԿԱՆԻ ՏԱԼՎՈՐԻԿԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը 7
2. Աշխատակիցների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| Հ/Հ | ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | Հաստիքային միավորը | Պաշտոնի դրույքը |
|---|---|---|---|
| 1 | Համայնքի ղեկավար | 1 | 186595 |
| 2 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 133585 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

| | | | |
|---|---|---|---|
| 1 | Աշխատակազմի քարտուղար | 1 | 129869 |
| 2 | Գլխավոր մասնագետ | 1 | 127959 |
| 3 | Առաջատար մասնագետ | 2 | 171958 |

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ

| | | | |
|---|---|---|---|
| 1 | Հավաքարար | 1 | 66138 |

| | | |
|---|---|---|
| Ընդամենը | 7 | 816104 |

ՏԱԼՎՈՐԻԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ.ՍԱՂԱԹԵԼՅԱՆ